ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-423-04.11.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ 96.1-ին հոդվածի վերնագրում և հոդվածում «տեխնիկական կանոնակարգերը» բառերից հետո լրացնել «կամ տեխնիկական անվտանգության կանոնները» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 188-րդ հոդվածի վերնագրում «Տեխնիկական կանոնակարգերով,» բառերից հետո լրացնել «տեխնիկական անվտանգության ոլորտում այլ նորմատիվ իրավական ակտերով,» բառերը, իսկ 4-րդ, 7-րդ, 9-րդ մասերում «Տեխնիկական կանոնակարգերի» բառերից հետո լրացնել «կամ տեխնիկական անվտանգության ոլորտում այլ նորմատիվ իրավական ակտերի» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1-ին մասից հանել «24-րդ,» թիվը և կետադրական նշանը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ *Հայաստանի Հանրապետության* օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)՝ ~~96.1-րդ~~ *96.1-ին* հոդվածի վերնագրում և հոդվածում «տեխնիկական կանոնակարգերը»

բառերից հետո ~~համապատասխան հոլովածներով~~ լրացնել «կամ տեխնիկական անվտանգության կանոնները» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 188-րդ հոդվածի վերնագրում «Տեխնիկական կանոնակարգերով,» բառերից հետո լրացնել «տեխնիկական անվտանգության ոլորտում այլ նորմատիվ իրավական ակտերով,» բառերը, իսկ 4-րդ, 7-րդ, 9-րդ մասերում «Տեխնիկական կանոնակարգերի» բառերից հետո լրացնել «կամ տեխնիկական անվտանգության ոլորտում այլ նորմատիվ իրավական ակտերի» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 244.7-րդ հոդվածի 1-ին մասից հանել «24-րդ,» թիվը *և կետադրական նշանը:*

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-423-04.11.2022-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) լրիվ անվանման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը շարադրել «վերաբերյալ» բառից հետո՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված հաջորդականությամբ, այն է. «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում «96.1-րդ» ձևակերպումը փոխարինել «96.1-ին» ձևակերպմամբ՝ դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 96.1-ին հոդվածի «վերնագրում և հոդվածում «տեխնիկական կանոնակարգերը» բառերից հետո համապատասխան հոլովաձևերով լրացնել «կամ տեխնիկական անվտանգության կանոնները» բառերը»: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենսգրքի 96.1-ին հոդվածի վերնագրում և հոդվածում «կամ տեխնիկական անվտանգության կանոնները» բառերը լրացվում են առանց որևէ փոփոխության ենթարկվելու՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածից հանել «համապատասխան հոլովաձևերով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում «թիվը» բառից հետո լրացնել «և կետադրական նշանը» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է: